

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն
բանասիրական գիտությունների թեկնածու
Հերիքևազ Որսկանյան

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան
գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի
2026 թ. հունիսի 10-ի նիստի արձանագրությունից

ՀԱՍՄԻԿ ԶԻՎԱՆԻ ՀԱԿՈՒՅԱՆԻ

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՀԱՅ ԱՐԶԱԿՈՒՄ (2000-ԱՎԱՆ ԹԹ.)

ժ. 01.04 («Գրականության տեսություն») մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված
ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նիստին մասնակցում էին՝

բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Հ. Մուսայելյանը, բանասիրական
գիտությունների թեկնածուներ Գ. Կարազյոզյանը /հեռավար/, Ա. Սողոյանը
/հեռավար/, Ա. Զարգարյանը, Լ. Գասպարյանը, դոցենտ Ք. Բեջանյանը, դոցենտ Վ.
Արսենյանը /հեռավար/, դոցենտ Զ. Հայրյանը և Ք. Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության
բաժնի վարիչ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը:

Նիստի քարտուղար՝ Քրիստինե Հովհաննիսյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Հասմիկ Հակոբյանի «Միջտեքստայնությունը արդի հայ արձակում (2000-ական
թթ.)» թեկնածուական ատենախոսության ժ. 01. 04 («Գրականության տեսություն»)
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի համար ներկայացված ատենախոսության քննարկումն ու Երևանի
պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012
մասնագիտական խորհրդի նիստում հրապարակային պաշտպանության
երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բաժնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը, Բ.Գ.Պ., դոցենտ
Հովիկ Մուսայելյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Վահե Արսենյանը /հեռավար/, Բ.Գ.Թ. Լուիզա
Գասպարյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Զառա Հայրյանը, Բ.Գ.Թ. Գոհար Կարազյոզյանը

/հեռավար/, ք.գ.թ. Աստղիկ Սողոյանը /հեռավար/, ք.գ.թ. Արա Զարգարյանը և Քրիստինե Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունը նվիրված է ժամանակակից գրականագիտության առավել արդիական և տեսականորեն արդյունավետ ուղղություններից մեկի՝ միջտեքստայնության խնդրի ուսումնասիրությանը և միջտեքստայնության դրսևորումների արդի հայ արձակում: Թեմայի ընտրությունը հիմնավորված է, ինչպես ժամանակակից գրական գործընթացի առանձնահատկություններով, այնպես էլ հայ գրականագիտության մեջ միջտեքստայնության համակողմանի ուսումնասիրությունների համեմատաբար սահմանափակ քանակով: Հեղինակը խնդիրը դիտարկում է ոչ միայն որպես գեղարվեստական հնարքի, այլև որպես պատմական հիշողության, մշակութային ինքնության և ազգային փորձառության վերախմաստավորման մեխանիզմի, ինչը հետազոտությանը հաղորդում է տեսական և գործնական կարևոր նշանակություն: Ատենախոսության էջերում ուսումնասիրվում է գրականության տեսության դիտանկյունից կարևոր խնդիր՝ միջտեքստայնության հարցադրումը, որը նախագծվում է ժամանակակից հայ գրականության վրա: Համադրելով տեսական տարրեր մոտեցումները՝ Հակոբյանը հայ հեղինակների ստեղծագործությունների օրինակներով ներկայացնում է հարցի գրականագիտական, լեզվաբանական, փիլիսոփայական և նշանագիտական կողմերը:

Թեման արդիական է, քանի որ այն ժամանակակից գեղարվեստական մտածողության առանցքային թեմաներից է, որն առավել մեծ արձագանք է ստացել հատկապես վերջին տասնամյակների հայ արձակում: Ատենախոսությունում հատկապես կարևոր է ընդգծել տեսական մեծ հենքի առկայությունը: Հ. Հակոբյանն անդրադառնում է միջտեքստայնության դասական և ժամանակակից հեղինակների տեսական հայացքներին և դրանք կիրառում է հայ արձակի վերլուծությունում: Միջտեքստայնությունը դիտարկվում է թե՛ գրականագիտական և թե՛ մշակութաբանական, պատմափիլիսոփայական և սոցիոլոգիական համատեքստում: Աշխատությունը միաժամանակ ներառում է գրականության տեսության, պատմագրության, մշակութաբանական և փիլիսոփայական մտքի հատման կետերում ձևավորված մի շարք հիմնահարցեր՝ դրանք քննության առարկա դարձնելով արդի հայ արձակի նյութի վրա:

Միջտեքստայնությունը մեկնաբանվում է որպես պատմական հիշողություն, ազգային ինքնության և մշակութային փորձառության վերախմաստավորման միջոց: Դրանով ընդգծվում է հայ արձակում միջտեքստայնության գաղափարական և գեղագիտական առանձնահատկությունները:

Ատենախոսությունում դրական գնահատականի են արժանի հատկապես աշխատանքում կիրառված մեթոդաբանական մոտեցումները, որոնք հիմնականում պատասխանում են առաջադրված խնդիրներին:

Հետազոտության գիտական նորույթը հիմնավորված է, սակայն աշխատանքում նկատելի են որոշ վիճելի կամ հստակեցման կարիք ունեցող դրույթներ (օրինակ՝ մի քանիսը ոչ թե այս ատենախոսության ընթացքում ստացված գրականագիտական նոր գաղափարներ են, այլ արդեն իսկ կատարված գրականագիտական աշխատանքի արդյունք: Լավ կլիներ, որ այդ տարանջատումը հստակ տրվեր, ինչից կշահեր ատենախոսությունը): Ատենախոսության կարևոր արժանիքներից է տեսական հարուստ հենքը: Հեղինակը հանգամանորեն ներկայացնում և քննադատաբար յուրացնում է միջտեքստայնության հիմնական տեսությունները՝ 3. Կրիստինայի, Մ. Բախտինի, Ռ.

Բարսի, Վ. Մենետի, Մ. Ռիֆաթերի, Ջ. Ֆրոուի, Լ. Հաթչոնի և այլ հեղինակավոր տեսաբանների աշխատությունների հիման վրա: Հատկանշական է, որ տեսական դրույթները չեն ներկայացվում ինքնանպատակ կերպով, այլ դառնում են արդի հայ արձակի տարբեր ստեղծագործությունների մեկնաբանման արդյունավետ գործիքներ:

Հետազոտության առավել արժեքավոր ձեռքբերումներից մեկը միջտեքստայնության և պատմագրական մետաղեղարվեստականության փոխկապակցված քննությունն է: Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ ժամանակակից հայ արձակում պատմությունը հաճախ ներկայանում է ոչ թե որպես ավարտուն և անառարկելի իրականություն, այլ որպես բազմաձայն, վերաշարադրվող և մշտապես վերափոխվող տեքստ: Այս տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Վահագն Գրիգորյանի, Նորայր Սարգսյանի և Գրիգի ստեղծագործությունների վերլուծությունները, որոնցում բացահայտվում են պատմական հիշողության, քաղաքական դիսկուրսի և գեղարվեստական էրևակայության փոխազդեցության բազմաբնույթ ձևերը:

Աշխատության *գիտական նորույթը* պայմանավորված է նաև նրանով, որ միջտեքստայնությունը դիտարկվում է ոչ միայն զրականության ներտեքստային հարաբերությունների, այլև մշակութային հիշողության, հետհիշողության, ազգային ինքնության և պատմական տրավմաների ներկայացման համատեքստում: Հատկապես արժանի է ուշադրության այն հանգամանքը, որ հեղինակը միջտեքստային շերտերը դասակարգելու փորձ է կատարում առանձնացնելով պատմագրական, ինքնակենսագրական, բանահյուսական և մետալեզվական դրսևորումները:

Ատենախոսության կարևոր բաժիններից է աստվածաշնչյան ինտերտեքստի ուսումնասիրությունը: Արփի Ոսկանյանի, Արարատ Գյուլբանգյանի և Գուրգեն Խանջյանի երկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ աստվածաշնչյան նախատեքստը ժամանակակից հայ արձակում վերածվում է ոչ միայն մշակութային հիշողության կրողի, այլև հասարակական, քաղաքական ու էթիկոստեցիալ խնդիրների քննադատական մեկնաբանման միջոցի: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում նաև Գուրգեն Խանջյանի կողմների և միջարվեստային կապերի քննությունները, որոնցում հեղինակն ընդլայնում է միջտեքստայնության ավանդական սահմանները՝ այն դիտարկելով գեղանկարչության, գիտության, համացանցային մշակույթի և այլ նշանային համակարգերի հետ փոխհարաբերությունների շրջանակում: Նման մոտեցումը հետազոտությանը հաղորդում է միջգիտակարգային բնույթ: Հավելենք, որ ատենախոսության *թեմայի արդիականությունը* պայմանավորված է 2000-ական թվականների հայ արձակի համակարգված զրականագիտական վերլուծության անհրաժեշտությամբ՝ միջտեքստային կապերի, ալյուզիաների, մեջբերումների և պարոդիաների համատեքստում: Միջտեքստայնությունը հանդիսանում է 21-րդ դարասկզբի արձակի հիմնարար սկզբունքներից մեկը, որի միջոցով գրողները վերափոխվում են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգությունը:

Աշխատանքը բաղկացած է *ներածությունից, երեք գլխից*, որոնք ունեն համապատասխան տրոհումներ և որոնցում ամբողջացվում է առաջադրված խնդիրների քննական ճանաչողությունը, *էզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից* (112 անվանում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), ընդհանուր ծավալը 180 էջ:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության արդիականությունն ու գիտական նորույթը, նպատակը, խնդիրները, ինչպես նաև տեքստային, տեսական և

համեմատական վերլուծության մոտեցումների հենքով օգտագործված միջտեքստային վերլուծության, տեքստի վերլուծության (narrative analysis), պատմագրական մետագեղարվեստականության տեսության, համեմատական, պատմական մեթոդներն ու մեթոդաբանական հիմքը, որտեղ հեղինակը տալիս է թեմային առնչվող քննադատական գրականության ընդարձակ ակնարկ, ընդհանուր գծերով ներկայացնում է հարցի պատմությունը, նյութի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական և կիրառական նշանակությունները (ատենախոսություն էջ 8-9, սակայն *սեղմագրում* արտացոլված է միայն կիրառական նշանակությունը էջ 6): Աշխատանքում հեղինակը հանգամանալից անդրադարձ է կատարում միջտեքստայնության տեսական հիմքերին՝ հաջողությամբ տեղայնացնելով դրանք հայ գրականագիտական հարթության մեջ:

Ինչպես արդեն նշվեց, հետազոտության *գիտական նորություն* այն է, որ առաջին անգամ փորձ է արվում համակարգել և տիպաբանել արդի հայ արձակի միջտեքստային հնարքները: Հեղինակի կողմից առաջադրված դրույթները հիմնավորված են, իսկ տեքստային վերլուծությունները՝ փաստարկված՝ գրապատմական հարուստ տեղեկատվությամբ և ամրագրված՝ տեսական բավարար ընդհանրացումներով: Ատենախոսությունը հիմնականում կառուցված է տեղեկատվական-վերլուծական ընդհանուր սկզբունքի վրա, և այս առումով կատարված է ակնառու աշխատանք: Սակայն պետք է նկատենք, որ *նպատակներն ու խնդիրները* (ատենախոսություն էջ 4-5, *սեղմագրում* էջ 3-4) բավական լայնածավալ են ներկայացված, ինչը խաթարում է ատենախոսության տրամաբանական համակարգվածությունը և խախտում թեմատիկ կապակցելիությունը: Չնարավոր է, որ դրանք շփոթմունք են ստեղծել նաև ատենախոսի մոտ, ով ներկայացնելով Սոսյուրի, Ժենետի և այլոց տեսական առանց այն էլ հայտնի դրույթները, չի արտացոլել դրանց «միջտեքստայնության» լույսի ներքո փոխանցումը 2000-ի հայ արձակ: Եզրակացությունների 9 և 10 կետերը թեև վերաբերում են «միջտեքստայնությանը», բայց չեն վերհանում հետմոդեռնիստական հայ պատմագրական արձակի առանձնահատկությունները (որոնք իդեալ ատենախոսը ներկայացնում է 95-117 էջերում): Ակնհայտ է, որ մոդեռնիստ և հետմոդեռնիստ ցանկացած հեղինակ այս կամ այն կերպով օգտագործում է «միջտեքստայնության» մեխանիզմները, բայց բուն խնդիրը մնում է չլուծված, արդյո՞ք գոյություն ունի «միջտեքստայնության» ձևաչափ, որը կիրառվում է հենց հայ հեղինակների մոտ: Ատենախոսը իր առջև դրել է նաև նախատեքստի գործառույթի և/կամ իմաստի փոփոխությունը (ատենախոսություն էջ 5, *կետ* 2), որը, սակայն, չի արտացոլվում եզրակացություններ բաժնում:

Ատենախոսության դրույթներն տեղ են գտել հեղինակի հրապարակած 7 գիտական աշխատանքներում:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության առանցքային դրույթներին, /թեպետ որոշ եզրույթներ չեն ընդգրկվել, օրինակ՝ *հետազոտության հիմնահարցերը* (ատենախոսություն էջ 5-6), *առարկան* (ատենախոսություն էջ 9), նշված չէ նաև, թե՞ որտեղ է անցել *փորձաքննությունը* (սեղմագիր էջ 6): Այն շարադրված է հստակ և ընկալելի ոճով, ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Սակայն որոշ արտահայտություններ սխալ են թարգմանված կամ ձևակերպված (*BAK, HQC, обосновать теорию анализом армянской прозы: термин «интертекстуальность» введен Ю.Шей Кристева; работа основана на диалоге поэтики (с кем?), герменевтики, феноменологии и социологии; интертекстуальность ներկայացվում է քրիստոմոդերնիստական մեխանիզմ: в разделе заключения нами представлены такие (какие?) выводы, к которым мы пришли*; Summary *Significance of the Topic*,

թեպետ հաջորդ էջում կարդում ենք *The introduction presents the relevance of the topic; formulas; conclusion summarizes the findings (սեդ. էջ 21-26):*

Կարելի է նշել մի քանի դիտողություն, որոնք, սակայն, չեն նվազեցնում աշխատանքի ընդհանուր գիտական արժեքը: Նախ, որոշ դեպքերում հետմոդեռնիզմի և հետհետմոդեռնիզմի սահմանագծումները կարող էին ավելի մանրամասն տեսական հիմնավորում ստանալ, հատկապես այն ստեղծագործությունների պարագայում, որոնք ցուցաբերում են երկու համակարգերին բնորոշ հատկանիշների համադրություն: Բացի այդ, առանձին ենթազույգներում երբեմն զգացվում է տեսական եզրույթների խտություն, ինչը որոշ չափով դժվարացնում է հիմնական գաղափարական շեշտադրումների ընկալումը:

Ցանկալի կլիներ նաև միջտեքստայնության առաջարկվող տիպաբանության առավել ընդարձակ համադրությունը միջազգային արդի տեսական ուսումնասիրությունների հետ. ինչպես նաև ավելի հստակ տարանջատել զուտ գրական ազդեցությունները գիտակցված միջտեքստային հևարքներից (միտումնավոր այլուգիա, պարոդիա) որոշ հեղինակների գործերում:

Այն, որ հայտնի Ֆրանսիական ծագումով ամերիկացի բանասեր, նշանագետ Մայքլ Ռիֆաթերը ունի անուն, ատենախոսը հիշում է միայն աշխատանքի 22-րդ էջում՝ զրկելով նրան դրանից և՛ սեղմագրում (*տես էջ 4, 21 – Риффатер; 24 – Riffaterre*), և՛ էջ 11-ում, իսկ 17-ում հայտնվում է միայն Մ.: Իդեալ նշենք նաև, որ գրականության ցանկում չկան Ռիֆաթերի աշխատություններից ոչ մեկը, թեկուզ ամենահայտնիները՝ *Riffaterre, Michael. Text Production (Translated by Terese Lyons), 1983; կամ Intertextual Representation, 1984; կամ Fictional Truth, 1990.*

Չնայած ատենախոսության կուռ կառուցվածքին ու տրամաբանված վերլուծություններին՝ դրա էջերում կան նաև մասնակի տեխնիկական վրիպակներ, որոշակի բացթողումներ ու թերություններ, որ ստվերում են ընդհանուր աշխատանքը: Օրինակ՝ տողատակերում հիշատակված որոշ աղբյուրներ ներկայացված չեն ընդհանուր գրականության ցանկում (*տես էջ 25-ի № 4, 5; էջ 64-ի № 9*): Նաև Ռ. Բարտի (*Барт 1989, 553*) – էջ 32); Գաբրիել Գարսիա Մարկեսի «Հարյուր տարվա մենություն» վեպը (*տես էջ 26, 178*); Լուիս Քերոլի «Ալիսան Հրաշքների աշխարհում» (*տես էջ 27-28*); Մ. Բախտինի և նրա գործընկեր Վալենտին Ն. Վոյոսինովի իրականում Վոյոսինովի «Մարքսիզմը և լեզվի փիլիսոփայությունը» աշխատությունը (*տես էջ 32 – պետք է լինի ВОЛОШИНОВ В. Н. (М. М. Бахтин). Марксизм и философия языка: Основные проблемы социологического метода в науке о языке. Комментарии В.Махлина. «Лабиринт», 1993*): Նրբեմն նշված աղբյուրները չեն համապատասխանում գրականության ցանկին (*տես էջ 74-ի № 12-ը և էջ 177-ի № 70-ը; էջ 75-ի № 13-ը և էջ 175-ի № 36-ը և այլ*): Որոշ աղբյուրների համար նշված չեն հրատարակության վայրը (*տես էջ 173-180-ի № 5, 22, 23, 47, 49, 52, 56, 77, 86 և այլ*), հրատարակչությունը (*տես № 10, 42, 52, 53, 77, 86, 99, 101, 103, 104, 105 և այլ*) կամ էջերի ընդհանուր քանակը (*տես № 55, 60, 64, 65, 68, 70, 78, 80, 81, 85, 90, 96 և այլ*): Կցանկանայինք նաև, որ ատենախոսը պարզաբաներ էջ 174-ի № 15 և 16; էջ 177-ի № 61 և 62 կետերը: Հավելենք, որ գրականության ցանկը պետք է ներկայացվի այբբենական կարգով (*տես էջ 176 № 55, 56, 61-67, 71-78, 78, 85-89*):

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է առաջադրված նպատակներին, իսկ տեսական և գործնական կյուրերի հարաբերակցությունը հավասարակշռված է, շարադրանքը հիմնականում տրամաբանական և հետևողական, լեզուն գիտական, սակայն տեսական անդրադարձերի հատվածներում երբեմն կրում է

օտար լեզվական կառույցների ազդեցությունը: Նաև նշենք «ոչ միայն... այլև» շաղկապի կիրառման սխալ «ոչ միայն... այլ» ձևը, ինչպես օրինակ 8, 22, 38, 58, 79 էջերում:

Այդուհանդերձ, նշված դիտողությունները կրում են առավելապես քննարկողական բնույթ և չեն ազդում աշխատանքի ընդհանուր գնահատականի վրա: Հակոբյանի ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որը կարևոր ներդրում է արդի հայ գրականագիտության մեջ: Այն հաջողությամբ համադրում է ժամանակակից գրականության տեսության նվաճումները և արդի հայ արձակի խորքային ընթերցումը՝ բացահայտելով միջտեքստայնության բազմաշերտ դրսևորումներն ու գործառույթները:

Որոշեցին՝

Հիմք ընդունելով, որ զգալի աշխատանք է կատարված նյութի ուսումնասիրության ու գիտահամակարգման առկայությամբ, որը վկայում է հեղինակի մասնագիտական պատրաստվածության, տեսական մտածողության և գրականագիտական վերլուծության պատշաճ մակարդակի մասին, բաժինը Հասմիկ Հակոբյանի «*Միջտեքստայնությունը արդի հայ արձակում*» ատենախոսությունը բաց քվեարկությամբ հանձնարարեց պաշտպանության: Նիստի մասնակից երկու գիտաշխատող քվեարկեցին դեմ:

Այսպիսով, ամփոփելով թեկնածուական ատենախոսության մեր գնահատականը, կարծում ենք, որ կատարվել է ծավալուն աշխատանք, որը, ունենալով հայեցակարգային հիմնավորված ապարատ, կարող էր լինել անթերի: Թե ինչպիսի մեկնաբանություն կտա Հասմիկ Հակոբյանը մեր հարցադրումներին, ցույց կտա պաշտպանության ընթացքը: Ըստ այդմ, եզրակացությունը թաղնում ենք մասնագիտական խորհրդին:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝

 Բ.Գ.Ք., դոցենտ Բ. Բեջանյանը

Հաստատում եմ Բ.Գ.Ք., դոցենտ Բ. Բեջանյանի ստորագրությունը՝

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն, 
բանասիրական գիտությունների թեկնածու Մարինե Սարգսյան

16 հունիսի 2026 թ.